



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԱՐԶԱՐԱՐԱՆ


ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 176

5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ

ՏՕՂԱՑՈՅՑ



Դեկտեմբեր 6 † Կիր. դձ.

7 Բշ. ղկ.

Դ. Յիսնակաց:

Ս. Մինասայ, Երմոգինեայ, Գրաբոսի
եւ Կամաւոր աղբասացն Յովհաննու
եւ Ալեքսիանոսի: Եւ սրբոցն Եւսուա-
սիոսի, Օփսենսիոսի, Եւգինեոսի, Ով-
րեսեսի եւ Մարգարիոսի:

8 Գշ. աձ.

Ս. Կուռնելիոսի հարիւրապետին եւ
Շմաւոնի ազգականին Քրիստոսի, եւ
Պողիկարպոսի Զմիւռնիոյ հայրապե-
տին եւ արեւելեան վկայիցն:

9 † Դշ. սկ.

Տօն Անարատ Յղութեան Ս. Կուսին:

10 Եշ. դձ.

Ս. Իգնատիոսի ասուածազգեաց հայ-
րապետին.

11 Ուր. քկ.

Պահոց:

12 Շք. զձ.

Ս. Յակովբայ Մծբնայ հայրապետին եւ
Մարուգէի ճգնաւորին:



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՒԱԹ-ԱԹԵՐԹ

Զորրոդ սարի 5 Դեկտեմբեր 1914 թիւ 176

«Մրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը բա-
նանակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
արել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մրբազան Հայրն սրագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ըմբեղողներն»:

Նամակ Կարգ. Մէրի տէր Կայի, առ Ամեն. Ս. Պողոս Պետրոս ԺԳ. Թերզեմ Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտէ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Մշտնջենական է խաւարի պայքարը
լուսոյ դէմ: Խաւարը կ'ուզէ, կը ճգնի
յաղթահարել, մարել լոյսը. կը նախան-
ձի անոր, կը տառապի անոր շողերէն՝
իբրեւ նոյնքան դաշոյններէ. քանզի լոյսը
կը փեռնկտէ խաւարին թանձր ամպը,
և իր անխնայ ձաղկիչ և ցոլացուցիչ
խուրձերով՝ կը յայտնէ անոր թշուա-
ռութիւնը: Այսպէս լոյսէն հեռու ապ-
րող մարդիկ, որ կը մտնին ի խաւարի

և ի ստուերս մահու, կ'ատեն լոյսը.
կը փափաքին մեռցնել լոյսը, սրբապիղծ
ձեռքեր կը վերցնեն անոր դէմ: Կ'ու-
զեն որ աշխարհս խաւարի մէջ սուղուի՝
նախկին անկերպարան քառսին նման.
որպէս զի իրենց չար գործերը աննշմա-
րելի մնան. «Մարդիկ խաւարը յոյսեն
աւելի սիրեցին, վասն զի իրենց գոր-
ծերը յար էին» (Յովհ. Գ.):

Այդ լոյսը՝ բանն Աստուծոյ է, Աս-
տուծոյ խօսքը ճրագի պէս կը լուսա-
ւորէ մեր շաւիղները, մեր հոգիները,
մեր սրտերը: Ասոր համար է որ աշխարհս՝
որ ի յարին կայ, կը ճգնի լուեցնել
Աստուծոյ խօսքը, բարի լուրը, յարիսե-
նական կեանքի խօսքը. և զարհուրելի

շօինդի և աղմուկի մէջ կ'ուզէ խեղդել զանոնք:

Հին ատենները բացայայտ հալածանքներով կ'ուզէին լռեցնել քրիստոնեաները. դժոխք իր բոլոր ջանքերը ի գործ կը դնէր. ճշմարտախօս լեզուները կը կտրէին: Այլ ճշմարտութիւնը չլիքներու մէջէն վեհօրէն կ'ազաղակէր, իր անկապտելի, իր յաւիտենական յաղթանակովը. «Միթէ Աստուծոյ խօսքը կրնայ կապուիլ»։ — «Աստուծոյ խօսքը հասնո սուրի կը նմանի»:

Հիմա, Աստուծոյ խօսքը լռեցնելու համար, աշխարհ դարձեալ կը հալածէ սակայն գլխաւոր մաքառումը՝ ձեւը փոխած է. դժոխք իր չար արուեստը նոր եղանակով կը գործադրէ վերջին ժամանակներուս մէջ: Գրական, մատենադրական դարձած է՝ չարին, խաւարին ահեղ պայքարը: Թէեւ այն շատոնց կար, բայց ո՛չ երբեք այսքան ուժգին եղած է, ոչ երբեք այսքան մեծ ծաւալ ու համեմատութիւն առած է:

Ստուծիւն, մոլորութիւն, խաւար, ողորձած են գրական հրապարակը. տպագրութիւնը աննկարագրելի ճիգեր կ'ընէ՝ ճշմարտութեան և լուսոյ դէմ: տպարանները ուռկանի պէս պատած են բովանդակ երկրագունդը, Բրիտոտոսի փրկած հոգիները սատանային որսալու համար: Աղանդաւորները, գունդագունդ և փաղանդանման կը վարեն այս ահաւոր ճակատամարտը. անհուն ծախքերով ու անլուր զոհողութիւններով. իրենց դժոխային մահացու գործին իրեն անթիւ նետեր՝ կը գործածեն տպագրիչ տառերը:

Եւ ահա պիղծ հեղեղի պէս կը վառէ չարութիւնը գրքերէ, անկրօնու-

թիւն, անբարոյութիւն ուսուցանող գրքերէ, օրաթերթերէ, պարբերականներէ, պատկերազարդներէ, ահագին մըրցումով, անխիղճ անպատկառութեամբ:

Իսկ բարին, իսկ ճշմարիտը, կը լռեն միթէ անոնք ալ: Ո՛հ, ո՛չ. միթէ Աստուծոյ խօսքը կապուած է, կ'ազաղակեն անոնք ալ, մարգարէին տրուած հրամանին համաձայն՝ եթէ մարդիկ լռեն, քարերը պիտի աղաղակեն: Վերջ ի վերջոյ ստուծիւնը պիտի խայտառակուի անշուշտ, մոլորութիւնը պիտի դատապարտուի յաւէտ: Սակայն հիմա պայքար է. բարին պէտք չէ լռէ. բարի մարդիկ բնաւ պէտք չէ ուժաթափ ըլլան: Եւ ասոր համար է որ Եւրոպայի մէջ և այլուր բարիները անլուր ճիգեր կը թափեն, գումարներ կը ծախսեն չար տպագրութեան, անամօթ հրատարակութեանց դէմ մաքառելու համար, որպէս զի անոնց թոյնը անազդեցիկ դարձնեն, որպէս զի անոնց քաղցկեղը չտարածուի վտանգաւոր շրջառիկ փտութեամբ:

Ուստի անգին ջանքերով լաւ գիրքեր կը հրատարակեն, այլ մանաւանդ լրագրութեան կարեւորութիւն կու տան մեծամեծ զոհողութիւններով, և այլ եւ այլ ձեւերու տակ. մանկութեան յարմար անունք կը ջամբեն անով. անով երիտասարդութիւնը կորովի կը պահեն և արթուն՝ ամէն քայլափոխին լարուած որոգայթներէն. յարբունա հասած և հասունցածներուն ալ մտքին ու սրտին յարմար պաշարներ կը պատրաստեն: Եւ անթուելի են բարիքները զորս կը սփռէ բարի տպագրութիւնը, բարի հրատարակութիւնը, բարի լրագրութիւնը:

Սակայն ցաւալին դարձեալ մեր մի-

չափայրին վիճակն է։ Ինչպէս ուրիշ ան-
գամ առիթ ունեցանք ըսելու, չարը իր
ամենայն փութաճանուլթեամբ իր ար-
բանեակներուն միջոցով ամէն աւեր կը
գործէ տպագրութեամբ։ Հայ միջավայ-
րը աւաղելի է յայտմ մասին։ Արդէն
էջմիածնականներուն առողջամիտ և լաւ
խորհող մասն ալ կ'ողբայ այս կործա-
նում։ Կուսակցականութիւնը երգուըն-
ցած թշնամի դարձած է կրօնքի ու
բարոյականի։ Իր ո՛վ գիտէ ինչպէս հա-
ւաքած դրամներով ահեղօրէն կը պայ-
քարի այն ամէն բանի դէմ որ լաւ է.
սուտանուն ազատութեամբ կ'ապականէ
ամբողջ սերունդներ։ Ուստի և լրագրու-
թեան կու տայ ամէն ոյժ։ Անոր դէմ
կա՞յ օրինաւոր պայքարը... ո՛հ, ո՛րքան
խեղճ պայքար։ որպիսի՜ ձեռքերու ու
խիղճերու մնացած է ճշմարտութեան
պաշտպանութիւնը։

Իսկ մեր Հասարակութիւնը ո՛րչափ
աւելի յետամնաց է. մտածողի մը հա-
մար կարելի չէ սրտին ցաւը զսպել։ Եւ
ո՛չ մէկ օրաթերթ ունինք. հարիւր
հազարաւոր համրուող, այնչափ թեմեր,
միաբանութիւններ պարունակող, արե-
ւելքի մէջ համեմատաբար ամէնէն լու-
սամիտ հասարակութիւն մը, հակառակ
ա՛յնքան ազմուկներու, համարտակու-
թիւններու, ազգասիրական երեւոյթնե-
րու և ո՛չ մէկ օրաթերթ ունի. ինչ
ամօթ, ինչ ցաւ, որպիսի՜ կորանք։ Կա-
րելի՞ է գտնել համեմատութեան մէկ
եզր, և ո՛ր հասարակութեան հետ, ըլ-
լայ այն ամենէն տգէտը, ամենէն յետ-
նեալը։ Խօսիլ գիտենք, քննադատել գի-
տենք, բամբասել ու հրամայել քաջ գի-
տենք. բայց աշխատիլ, աշխատակցիլ,
զօհողութիւն ընել, գոնէ միաբանիլ և

արտաքին թերթերու տրուած դրամին
գոնէ մէկ մասը յատկացնել թերթ մը
հանելու որ մերն ըլլայ... ոչ ոք կը խոր-
հի. կը յուսահատի... սառնատեսակ ան-
տարբերութիւնը կը մեռցնէ իր բոլոր
աշխոյժն ու հաշիւը։

Ամենամեծ հանճարներ իրենց պա-
տիւ ու փառք սեպեցին այս ասպարէ-
զին մէջ մաքառիլը. ինչպէս են Ս. Ֆրան-
չիսկոս Սալէզեան, Եր. Տօն Պոսթօ, Օ-
զանամ, Լուի Վէօյեոյ, ո՛չ երբեք ըստ
բաւականի ողբացեալն Կոմս տը Մէօն,
և այլ անթիւ անհամարներ։ Առ այժմ
սակայն ուրիշներուն վրայ լռելով,
պիտի խօսինք Երջանկայիշատակ և գեր-
զգօն Ս. Քահանայապետ Պիոս Ժ. ի վրայ
որուն շնորհիւ է արդէն որ մենք կարող
կ'ըլլանք գոնէ այսչափ գրել այս էջե-
րուն մէջ... Գոնէ այս օրինակն ազդէր
մեր վրայ և հալեցնէր մեր սրտին սա-
ռերը և զարթօնք ըլլար մեր քնաթափ
թմրութեան... Վենետիկի մէջ, — ո-
րուն սիրելի և միշտ ցանկալի պատրիարքն
եղած էր Պիոս Ժ. երբ կարդինալ Սար-
թօ էր, — Ռիալթօ կոչուած պատմական
կամուրջին մօտ նոր շէնք մը կայ, որուն
վրայ պղնձաքանդակ դրոշմուած է սա
վերտառութիւնը.

Ահա գերագոյն գործն Պապին ի Վենետիկ

Պիտի հարցնէք թէ Տօթերու մայ-
րաքաղաքին մէջ Պիոս Ժ. ի գերազան-
այս գործն ինչ է։

Օրաթերթ մըն է այն, բացարձակա-
պէս կաթողիկէ, որ կը կոչուի Տիժէզա
(պաշտպանութիւն)։ Կարդինալ Սարթօ
հիմնած է զայն և այն տանը մէջ կը
տպուի։

Սակայն Պիոս Ժ. այդ օրաթերթին

միայն հիմնադիրը չեղաւ, այլ նաև ա-
նոր եռանդուն ու գործունեայ տարա-
ժողը: Ամէն դժգոհութիւն Վսեմափայլը
անձամբ կ'երթար կոնսօլներով մինչեւ
իսկ պատրիկեան պալատները, յանձնա-
րարելու համար այդ բարի օրաթերթը
և նպաստներ խնդրելու:

Գեղեցիկ օրինակ՝ պիտանի և ընտիր
Մամուլի: Կրնայ ըլլալ որ չափերն պատու
տան այս վախճանաւ, բայց իրենք զիրենք
չեն տար: Առաքելալը կ'ըսէր. Ծախեցից
եւ ծախեցայց: Եւ ո՛րչափներ կան, կա-
րողութիւն ունեցող Կաթողիկէից մէջ,
որոնք և ոչ իսկ կը խորհին բան մը տա-
լու, օգնելու բարեգործութեանց ամե-
նագլխաւորն եղող այս գործին, որ
ընկերային կեանքին այժմու առանցքն է:

1911ին Մատրիտի Ս. Հաղորդու-
թեան Համաժողովին մէջ՝ Կաթողիկէ
լրագրութեան վրայ խօսելով, Սպանիոյ
մեծ ճարտարախօսն Հ. Նունէտ, զար-
մացումով մէջ կը բերէր Սալամանդայի
եպ. Գեր. Գամարայի սա հռչակաւոր
խօսքերը. «Եթէ արդի պահանջումներու
կատարելապէս ծառայող ամենօրեայ
Կաթողիկէ թերթ մը հիմնելու համար
հարկ ըլլար Սիլիչեայի Մայր Եկեղեցին
ծախել, կարծեմ կը ծախէի»:

Վենետիկի մէջ Կարդ. Սարթօ մեծ
յաջողութիւն ձեռք բերաւ: Ամէն տեղ
թափանցող իր օրաթերթին շնորհիւ,
քաղաքական կեանքը կերպարանափո-
խուեցաւ: Եկեղեցւոյ թշնամի եղող թա-
ղապետութիւնը ինկաւ և կրօնքի նպաս-
տաւոր նոր մը ընտրուեցաւ: Թողիք ե-
ղած եկեղեցիները նորէն լեցուեցան:
Հաւատքը վերածաղկեցաւ և վտանգուած
Վենետիկը վերստին եղաւ քրիստոնեայ
քաղաք մը:

Իրաւունք ունէր՝ եռանդուն պատ-
րիարքը, Ս. Քահանայապետ Պիոս Ժ.
ըլլալէն վերջը, 1910ին, աներկիւղ ծա-
ւաղիչներ կազմելու համար, գրելու սա
խօսքերը՝ որ ամբողջ ծրագիր մըն են
անգործունեայ և թերեւս անհոգ այն-
չափ քրիստոնէից համար. «Կաթողիկէ
թերթեր հրատարակելը եւ զանոնք բա-
րիկերուն ձեռքը տալը բաւական չէ.
պէ՛տ է նաեւ զանոնք կարելի եղածին
չափ հետեւեցնել սարածել, զանոնք ա-
մենուն կարդացնել եւ մանաւանդ ա-
նոնց, զորոնք ֆրիսոնէական սէրը կը
պահանջէ փրկել գէշ թերթերու թունա-
ւոր աղբերակներէն»:

Երանի՛ թէ կրբերը դադրէին, ամէն
դժբախտ իր չափուն սատարէր և հայ-
Կաթողիկէ համայնքը ունենար գո՛նէ
մէկ օրաթերթ...

Ո՛րքան համեստ, ծիծաղելի կամար-
տասունքի ըլլալու աստիճան համեստ
փափա՛ք... սակայն և այնպէս պիտի
կարենա՞յ իրագործուիլ:

Հին ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Փ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՅԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՑ ԴԷՄ

1829 3 Յունուարի մէջ

(Շար.)

1 Յուլիս.—Սյուր Ինկիլիզի դեսպանը ա-
լայով արքային դնաց Պէօլեք տէրէ չայրին.
օրտուն հոն եղած պատճառովը ասանկ եղաւ.
ան խըթար սէյրիճի մարդ կար քի գրեթէ
բոլոր Ստամպուլի մեծ մասը հոն սէյրիճի դա-
ցին:

9 Յուլիս.—Այս գիշեր Սարաֆ Պուռնին կրակ եղաւ, վեց եօթը եալը երեցան։ Աս կրակին պատճառաւը խնդանճի օղլու Ստեփանը կրակին երթալինի, Հէյպէթուլլահ Սուլթանին սարային կոնակը թէհնա ըլլալով հինգ հոգի բէյտահ կ'ըլլայ ան միջոցը ճամբան, ասունց մէկը կու գայ Ստեփանին ձեռքին ֆէնէրին թէքմէ մը կը զարնէ, ֆէնէրը ձեռքէն կ'երթայ, մէկալնոնք մէկը ոտքէն, մէկը ձեռքէն բռնելով երեսի վրայ կը պարկեցունեն կը սկսին զարնել. որը ձեռքերը կը խածնէ, որը օմուզներուն քարով կը զարնէ, որն ալ գլոխը գետին քարին կը զարնէ։ Ան խրտար ճակատը քարերուն կու գայ քի, ճակատը կը ծակի, արունը սէլի պէս կը սկսի վազել. ան կոնակին խուսուր տեղէն թէքմէյով զարնել շատ։ Ան միջոցը կրակի գացող մարդիկ վրայ գալու պէս կ'ըլլայ նէ կը սկսի Ստեփանը՝ ծան քուրթարան եօգ մուրսելով կանչելու։ Կը նային քի մարդիկը վրայ պիտի գան կը թողուն կը փախչին, երնամ ըսել քի մէկ քիչ միջոց տահա անցնէր եւ վրան մարդ չհասնէր նէ, ան տեղը պիտի սպաննէին, էյէր վրանին չախը մը գոնուեր նէ շատոնց սպաններ էին։ Խիւլասա արիւնները վազելով ետ կը դառնայ Ստեփանը կու գայ տուէն, զեր զեպիլ տէօշէկը կը պառկի։

11 Յուլիս.— Պատրիարքարանը խորհուրդ ըրին հայք Նառը խաբուլի ժամը և հաստալարը հին ըլլալով, նորէն շինելու համար և կ'ըսեն կոր քի քէվլ ըրեր են երեք հազար քէսէ ստակի։

Յետոյ ան կիրակի օրը ամէն ժամ ծանուցում ըրին իմտատիէյի համար. սարաֆէ ի զատ էսնաֆը երեք պոյ ըլլայ իմտատիյէ տուող. առաջինը 40 ղր., երկրորդը 30 ղր., երրորդը 10 ղր., սարաֆները ինչ պիտի տան չիտենք, հիմակուհիմայ ըրած թէրթիպին այսպէս է։ Ասկէ ի զատ տները կէօյիայ քալելով կնիկներէն մարդ գլուխ տէյէրին կէօրէ իմտատիէ պիտի ժողվի կ'ըսուի կոր. ժամանակիս մէջ մարդս ուտելիքի ստակ կարող չէ գտնալու կամ վաստկելու. ասոնց իմտատիյէ ուսկից պիտի տրուի չիյտեմ. և աս իմտատիէի պատճառաւ. հայոցմէ շատ մարդ տա-

ծիկ պիտի ըլլայ՝ խօսքս նշան դրէք, զէրէ հին իմտատիէյի ժամանակը ամէն մարդուն սիրտը էրեր էր։

Յետոյ Պէզճեանը Ստեփանին գլխուն եկած բանը իմանալով կը կանչէ կը հարցնէ թէ ինչպէս բան է աս, կամ ճանչցա՞ր մի ընողները ո՞վ էին։ Մէյէր Ստեփանը ան գիշերը իր ձեռքի ֆէնէրին զարնողը ճանչցեր է, Հրամբես աղա կ'ըսէ, աս բանը ինծի ընողները հինգ հոգի էին և իմ ձեռքի ֆէնէրիս զարնողը արապաճի մէնթէշ հրեան էր և մէկալ չորսն ալ հրեայ էին. Կ'ըսէ աղան. Սէպէպ մը կա՞ր աս բանիս ըլլալուն. խայր էֆէնտիմ. Կ'ըսէ Պէզճեանը. հրեաները հայոց ոխ ունին, աս բանս անոր համար է և դուն իմ մարդս ըլլալով, աս բանս ինծի ընել է, պէլքի իս կ'ընային խապիլ էր քի ինծի պիտի ընէին, հայտէ դու գնա բանդ. Անմիջապէս Պէզճեանը հրեաներէն մուպահեանը խամ Սալօմօնը կը կանչէ և անոր շատ խօսք ըսելէն վերջը աս մարդիկը կ'ուզեմ ձեզմէ, եթէ որ չէք կրնար մեզի տալ նէ, գիտցած ըլլաք քի ձեզմէ շատ մարդ սպաննել կու տամ և ձեր մեծերէն. գնա հայտէ բանդ. որը բարի է նէ ան ըրէք, Հրեան փէք աղէկ ըսելով կ'երթայ. և իրենց մէջը խորհուրդ կ'ընեն, աս արապաճը մէնթէշ ըսածովս չորս հոգի տահա հրեայ կը բերեն. Օրթագեղի զապիթին իրենց ձեռքովը թէսլիմ կ'ընեն, ճէմաաթ պաշինիը ըսելով, մենք մեր մէջի էտէպսիզը կու տանք. չիյտենք քի ասոնք են մի նայեցէք թէֆթիշ ըրէք ու զուրցնել տուէք եւ մենք ալ անանկ էտէպսիզ խապուլ չենք ըներ մեր ազգին մէջ. զապիթը առաւ զասոնք խաբիս ըրաւ. Պէզճեանը անմիջապէս կ'երթայ վեր, Քարապիա թագաւորին նախը կ'ընէ, և տահա ի'նչ կը զուրցէ ո՞վ գիտէ, թագաւորն ալ Օսման փաշան կը խաւրէ Օրթագեղ, գնա՛ նայէ աս բանս, ըսելով. Կու գայ Օսման փաշան, աս հինգ հրեան կ'առնէ չիտակ վեր թարապիա խապսխանան կը տանի, հիմակուհիմայ այսպէս է նայինք վերջը ուր պիտի կայանայ. Էն նայէ քի ինչ աստիճանի գացեր է Պէզճեանին մեծուրթիւնը քի, ո'ր ժամանակ ուզէ կ'երթայ թագաւորին քով և ուզածը կը զուրցէ։

14 Յուլիս. — Այսօր սահաթը ութ ու կիսուն մօտ, Թօփխանային կողմը Լիւլէճիննրուն մէջէն կրակ մը յանկարծ ելաւ, տեւեց մինչեւ գիշերը եօթը, շատ ահզ ելաւ, գնաց մինչեւ հէնտէկը, անկից Խալաթիայի խուլէյին քիւլահը բռնկեցաւ, ան բռնկելովը էթրաֆի տուները սկսան երիւ, մինչեւ Բէրշէմպէ բազարը սուրբ Պետրոս ժամ, մազ մնաց ան ալ պիտի երէր: Պէրէքեաթ վէրսին Ֆրանսըզի պէյլիք նաւէն հարուրէն էլէլ սօլտադ խիճներով ելան, երկու ալ թուլումպա. անոնց խայրէթովը ժամը և շատ տեղեր անոնք մարեցին և ամէն մարդ ալ շաշմիշ եղան: Թուլումպային առջեւէն օֆիցիալը բաց խիճով առջեւէն և պաղը իւթիզա եղած ժամանակը, ամէն սօլտադ խըլընին բաց ըլլալով թուլումպան կը տանէին կը բերէին, մարդ կարող չէր բան մը ըսելու, ըսողն ալ եղաւ նէ խիճները կը ցուցնէին: Շատ ֆայտա եղաւ ասոնց խայրէթը էյեր մէկալ մեծ պէյլիքները վարը զըտնովէյին նէ, տասուերկու թուլումպա, հինգ վեց հարիւր սօլտադ կ'ըլլար, կրնամ ըսել քի շուտով կը մարէին, զէրէ ուրիշ թուլումպաներէն հիշ խեր չի կար:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈԳԵՆՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՍԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ" ԳՐԶԷՆ

Գիրք Թ. — Դ. Ի. — Դասաստմի եւ մեղաց պատիժ. Յերալմ վրայ:

(Շար.)

Ան ասեմ պիտի տեսնուի թէ՛ այս աշխարհիս վրայ իմաստուն եղած է այն մարդը, որ ստիպեցաւ Քրիստոսի համար յիմար ու արհամարհ ըլլալ:

Ան ասեմ հաճութեան առիթ պիտի ըլլայ՝ համարեւորեալս քաջաւոր ամեն նկողնութիւն, ու ամեն անօրէնութիւն իր քերական պիտի գոցի:

Ան ասեմ պիտի յայտնուի ամեն յերմեւանդ, ու պիտի օխտի ամեն անբարիք:

Ան ասեմ աւելի պիտի ցնծայ վշտաբեր ու մահացուած մարմինը, քան թէ միշտ փափկութեանց մեղսնած ըլլար:

Ան ասեմ պիտի պայծառանայ ցնցոյի հագուստը, ու պիտի խաւարի շփեղ պատմութեանը:

Ան ասեմ աւելի պիտի գովաբանուի ողորմելի տնակը, քան ոսկեղոռուց ապարանքը:

Ան ասեմ աւելի օգտակար պիտի ըլլայ անյողողող ու յարասեւ համարեւորութիւնը, քան աշխարհիս ամեն իշխանութիւն:

Ան ասեմ գեր ի վերոյ պիտի բարձրացուի միամիտ հնազանդութիւնը, քան ամեն աշխարհային խոռագիտութիւն:

Ս. ԲԵՆՆԱՐԴՈՍ, ՎԱՐԴԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. Քահանայապետը Գլխավորէն Հռոմ գարձաւ Ս. Բենարդոսի բնկերակցութեամբ: Ն. Սրբութիւնը զանկաւ նախ ձեռնովա զրկեց սրպէս զի ձեռնովացնելու հպատակութիւնը ապահովէ և զանոնք հաշտեցնէ Քրիստոսին: Տես, որոնց դէմ միշտ թշնամութիւն կ'ընէին: Սուրբ մեծ յաջողութեամբ կատարեց այս գործը: Յետոյ Ս. Հայրը զանկալ զրկեց Գերմանիա, որպէս զի կայսրը հաշտեցնէ Հերիկոսի, իր նախորդին, կոնստանտին և Փրեքերիքոս եղբորդիներուն հետ, ոչ նուազ յաջողութեամբ ի գլուխ հանեց նաեւ այս գործը: Յետոյ Ն. Սրբութիւնը Բիզանի ժողովքին կանոնց գործակալ Սուրբ Աբրահմ ներկայ գտնուեցաւ այս ժողովքին ամեն նիւտերուն: Հոն այնքան յարգութիւն կը վայելէր որ իր բնակարանին գետնը միշտ իրեն հետ տեսնուելու ուղղով եկեղեցականներով շրջապատուած կ'ըլլար, ոչ թէ իր գերմանացի շրջապատուած համար, այլ քովը գացողներուն ստուարութիւն ըլլալուն համար:

Ժողովքէն յետոյ Քահանայապետը զանկալ իւրեւ պատուիրակ Միլան զրկեց Բիզանի եպիսկոպոս Կիւլ և Ալբանի եպիսկոպոս Մատթէոս կարգինսնելու հետ, որպէս զի գարձեալ իրեն հպատակեցնէ նոյն եկեղեցին զոր Անսելմոս արքեպիսկոպոսը հերձուածով բաժնէր էր: Ս. Բենարդոս հետը առաւ նաեւ Շարքի եպիսկոպոս ժէոֆֆրուան, իր մտերիմ բարեկամը, այսքան կարեւոր բանակցութեան մը աւելի ծանրակշիւթիւն տալու համար: Կարելի չէ բացատրել թէ ո՞րքան մեծ պատուով ընդունուեցաւ Ամբողջ քաղաքը գիմարը ելաւ. ոտքերը կը համբուրէին, զգեստներէն կտորներ կը կարէին՝ մասունք չի տեսնու համար: Բանակցութիւնը կատարեալ յաջողութեամբ պսակուեցաւ:

Սուրբ Բենարդոս այս խաղաղութիւնը ամրապնդեց մեծամեծ հրաքններով: Շատ մը դիւստաներ հրապարակաւ բռնկեց: Այս հրաքններով աշխարհ մեծ համարում չահեցաւ Միլանի մէջ որ ամեն մահկանացունքն աւելի պատուուեցաւ այն տեղի իր տունը գիշեր ցորեկ մարգիկներով շրջապատուած էր: Ամէն անգամ որ դուռն ելլէր՝ անթիւ անհամար մարդիկ ետեւէն տաքեւէն կ'երթային հրապարակաւ:

զինք պատուելով: Բազմութիւնը այնքան ստուար էր որ չիղդուելու համար ստիպուեցաւ սենեակը փակուիլ և պատուհանէն խօսիլ ժողովրդեան: Անոնց կու տար իր օրհնութիւնը, տնոնց կը սորվեցնէր փրկութեան կտրեւոր ճշմարտութիւնները, և կ'օրհնէր նաեւ այն հացն ու ջուրը որ իրեն կը ներկայացնէին հիւանդներու բժշկութեան գործածելու նպատակաւ:

Մեր Սուրբը այս պատիւներն ու փառքերը մի միայն Աստուծոյ կ'ուզէր, իսկ ինքզինքը միշտ թշուառ ու արհամարհելի կը համարէր: Այս տրամադրութեամբ չընդունեցաւ իրեն առաջարկուած ձեռնովայի, Միլանի և Ռէմսի արքեպիսկոպոսութիւնները և Լանկիրի ու Շալոն-սիւր-Մառնի եպիսկոպոսութիւնները, նախաձեռնար համարելով կնգողը խոյրէն և բաժնի ու փոցը՝ եպիսկոպոսական դաւադարներ:

Պրնանտ որ գարձաւ անպատեհի ուրախութեամբ ընդունուեցաւ: Արեւիկէնի և Բուադուի մէջ ջնջեց հերձուածը Անտիգեոսո հակապապին, զոր Արիօմ գուքը և Անկուէմի ժեղար եպիսկոպոսը այն տեղ կը տածէին ամէն առաւել բռնութիւններ և անգթութիւններ բանեցնելով թէ՛ աշխարհականներու և թէ՛ քահանաներու նկատմամբ: Այնպէս զարհուրեցող Արիօմը իր ազգու խօսքերով, և մանաւանդ անոր ներկայացնելով Ս. Խորհուրդին մէջ ծածկուած գերազանց Տէրը, որ ստիպեց զանիկա խաղառ հրաժարիլ հերձուածէն և իննովկենտիս Բ. Պետրոսի օրհնուածը յաջորդ ճանչալ: Բիչ մը հոնգատեան ժամանակ գտնելով առանձնացաւ տերեւայտի խրճիթ մը, և հոն սկսաւ յօրինել Երգ-երգոցին վրայ հրաշալի մեկնութիւնը, որուն մէջ անկերեւ ցոյց տուաւ որ իր հոգին եւս մին է այն ողբախոհ հարսերէն որ երկիրքի ուրախութիւններուն հրաւիրուած են:

Քահանայապետը հեռացող զանիկայ այս հեշտալի կեանքէն և Հռոմ կանչեց: Սուրբին իտալիա ժամանումովը վերջ գտաւ եօթնամեայ մեծ հերձուածը: Ատեն մը Վիթերպա կեցաւ իր ժեղար եղբորը հիւանդութեան պատճառաւ: Բայց Աստուծոյ ընդունելով ժեղարի առողջութիւնը՝ զնոց Հռոմ, ուր Եկեղեցւոյ միացող հերձուածողներուն նշանաւորները: Անկէ անցաւ Կասսին լիւր ուր նոյն երջանկութիւնը հայթայթեց տեղւոյն կրօնաւորներուն, որոնք Անակղետոսի կողմը բռնած էին: Յետոյ Սալեռնոյ զնոց ուր Սուրբ Աթոռին բանակը իր շնորհիւ մեծ յաղթութիւն մը շահեցաւ Ռոմէր իշխանին դէմ: Եւ բանակցութեան մէջ մտնելով Բիզանի Պետրոսին հետ որ հոյակապ ճարտարախօս և իմաստուն օրէնսգէտ մըն էր և զոր Անակղետոս կարգիմալ և իրեն պատուիրակ ըրած էր, ստիպեց զանիկայ, հզօր պատճառարարութեամբ, որ թողու լքէ իր պաշտպանութիւնը, որ իր կողմ շատ տգէտ կամ շատ չար ըլլալը ցոյց կու տար: Հոն եւս մեծ հրաշք մը գործեց՝ իննովկենտիսի իրաւունքը հաստատելու համար:

ԳՍԹՈՒՔ ՄԵԶԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ (*) (Տեկամի)

55. Ճէհէննէմ ճէղալարընն էպետիլիինի ինքեար իտէպիլմէք իշուն տինսիլէր Թարաֆընտան իյճատ իտիլմիշ օլսն գրյաւար տա էհէմիլէթտէն սաղըթ տըր: չիւնքի պու խուսուստա շու իւշ ֆարգիյաթտան պաշգապիւր շէյ տէնիլէմէզ, եանի,

1. Եա կիւնահքեար գապահաթլարընը Թէլաֆի իտէրէք ծէնապը Հազգ. Թարաֆընտան գապուլ օլունըր,

2. Եա հիշ պիւր նէտամէթ էսէրի կէօրմէքսիլին Ալլահ օնա աֆլ իտէր,

3. Վէ եախօտ Ալլահ օնը եօզ իտէր:

Հալպու քի պու իւշ ֆարգիյաթ տա ծէնապը Հազգըն էվսաֆը միւլթէլիթէսինէ մուխալիֆ օլտուըր կիպի, ազլէն տախի շայանը գապուլ տէյիլ տիր:

1. Մէլարտան էօթէտէ նէ՝ օլաճաղընա տայիւր պիւր մանա վէրմէք իշուն զէմանըմըգ տինսիլէրինտէն պազըլարը պիւր թաղըմ ապէս նազարիաթա միւրաճաթ իտիյօրլար: Ժան Բէնօ՝ Չէմին ու Սէմա, Լուի Թիկիէ՝ Էօթիմիւն Փերտաղը, Յիւսմանիօն՝ Մէսքիւն տիւնեպարըն չօղուըր նամ քիթապարընտա էսկի թէնասիւլ (Météoroscops, հոգեգիտութիւն) պաթըլ նազարիյէսինի իլէրի սիւրիւյօրլար, զէ բուհլար թէքէմիւլ իթմէք զէ թէմիլէնմէք իշուն երլաղգտան երլաղա հիճէթ իտէրէր, տէյօրլար:

Պու նազարիյէլէրին քեաֆֆէսի տէ պիւրհանաղ գալլը միւնհրրհսիւր վէ միւլթէլաթը հալլէ քեաֆի օլմայուլ տահա իլէրի կէօթիւրէն խայայլը միւնհրար տըրլար: Շայտապու էօմիւրտէն սօնրա, քէնտիլիին, ծէնապը Հազգ. Թարաֆընտան գապուլ օլունմագ ֆարգիյէսի գապուլ իտիլէմէք օլուրսա, արթը գաւուըր իշանիլին ինֆաղընը քիմիւն իտէմէք հիշ պիւր շէյ գալմազ: Պու տիւնեպարի իտիլէրին, Ամահա պիլէմէյօրըմ քի պիւր չօհ հիճրէթլէրտէն սօնրա հինէ իսթիլֆար իթմէյէն քիմիւն իլէլ էպէտ երլաղգտան երլաղգա տօլաշմաղա մահլիւմ իտիլէմէք մի, տէյիլ մի... Պաղաթ օ թագաթրտէ տէ ինսան

(*) Տեա թիւ 174. էջ 747.

քէնտի զայնի ասիւնէսինէ վասըլ օլաւայա-
ճագ տըր քի. պուհը տա ազլ ու մանթըզ
գապուլ իթմէզ :

Քէզալիք, շայտ պու էօմիւրտէն սօնրա
իմննի պիր քեհրիպէ ճեմրեալի գապուլ իտի-
լէճէք օլուրսա. իւշիւննիւ, տէօրտիւննիւ,
իւա ախըրինի տէվրէլէր տէ գապուլ իթմէ-
մէյէ հիշ պիր սէպէպ գալմազ, Օ հալտէ շու
նէթիճէյէ կէլիր տայանըրը քի, Փենա ֆիւ-
սեյէր սօնուհա գատար Ալլահըն էվամիր վէ
նէհիյաթընը բայիմալ իտէպիլիրէր վէ առա-
լէթի իւանիյէնին տէ բէնչէսինէ տիւշմէզլէր :
Հալպու քի պէօլլէ օլմազ. էօլիւմ թէհրի-
պէնին սօնը վէ էպէտիլիք տէ օնըն գայէթի
տիր :

2. Հիշ պիր նեաւեք եսրի կեօրմեֆսիյին
ձենասը Հագզըն կիւնահեաւա աֆլ իրմեալի
ճե միւնֆինսիյ քի: Զիւնքի աֆլըզ գազլիյէ-
սի ճէպրի պիր շէյ տէյիլ տիր. կիւնահեաւ
թարաֆընտան հիւմըն իթիւրըլլա պէյանը
նէտամէթ օլուրտըրը թագտիրտէ հաւըլ օ-
լուր: Հալպու քի էօլիւմ կիւնահեաւըն ի-
րատէթինի, էպէտ իւլ ապատ կիւնահա
թագրի իթտիյինտէն, արթըզ օ սէրպէսթ
տէյիլ տիր, պէյանը նէտամէթ իթմէք խու-
սուընտա մուխթար տէյիլ տիր: Արթըզ ճէ-
հէննէմ կիւնահեաւ իշին պէր ճէլպ ու ճէզպ
մէրքէլի հիւքմիւնտէ տիր քի, պիր թաշըն
քէնտիլիյինտէն հալայա եիւքսէլմէսի միւմ-
քինսիզ օլուրը կիպի, պէտպալթ կիւնահ-
եաւըն տա Ալլահա տօղրու եիւքսէլմէսի
միւմքինսիզ տիր: Ագրէպ վէ եէլպօլմանը
տուրտըրմըլ օլան պիր սաաթ տայիմա ալի
սաաթը կէօսթէրէճէյի կիպի, էօլիւմիւն կիւ-
նահ իշինտէ տուրտըրմըլ օլուրը պիր բուհ
տախի էպէտ իւլ ապատ օ կիւնահ հալինտէ
տէվամ իտէճէք տիր :

Հէմ տէ Ալլահ օ պիր տիւնեատէ աֆլ
իթմէսի ֆարզիյէսի գանուըն իլահիին ին-
ֆագընը ֆեալիյին քեպիւհէն սագըր իսեհ: Ին-
սան օ պիր տիւնեատէ տախի մագհարը աֆլ
օլաճաղընա ճիւզի պիր սուրէթտէ տախի իւ-
միտ իտէճէք օլսա, արթըզ թէհրիպէլէր զէ-
մանընտա քէնտիսինի քի՛մ եախօա նէ՛ տուր-
տըրտալիլիր: Էյէր ճէհէննէմ էպէտի օլմամըլ

օլսա, արթըզ կիւնահեաւըն կիւնահտան կէ-
րի տուրտըրաճագ նէ՛ գալըր: Էպէտի պիր
ճէհէննէմին ճէզալարընըն թէհտիտի պիլէ ին-
սանլարը քէնտի վաղիֆէլէրինտէ թութմաղա
չօզ տէֆա քեաթի օլմայօրսա, եա օ ճէզա-
լարըն մուվաղգաթ օլմասը ֆիքրինին նէթի-
ճէսի նէ՛րէլէրէ գատար կիտէպիլիր :

3. Ալլահ քէնտի էվաաֆը իւանիյէսինէ
գարշը պուընմըլ օլմագսըղըն կիւնահեաւըն
եօզ տա իտէմէզ, չիւնքի

ա. Եօզ իրմեֆ, իլի իրմեֆ իւլգաթընըն
պիլ ճիւմլէ բլանլարընա մուղայիր տիր: Ալ-
լահ սէվտիյի իշին ինսանը խալզ իթմիշ օլ-
տուղուհանան, օնը էօլիւմիւլլիք վէ իրա-
տէթը ճիւզիյէ իլէ թէհիզ էյլէմիշ տիր, վէ
էպէտ իւլ ապատ քէնտի շէրէֆինէ խատիմ
օլմասընը իսթէր: Եու հալտէ, ինսան հիւր-
րիյէթինի սուլի իսթիմալ էյլէտիյի իշին, Ալ-
լահ քէնտի բլանընը թէպտիլ իթմէզ, եօգսա
ինսանըն սուլի աւվալինին էսէրի օլմուշ օ-
լաճագտը: Ալլահ քէնտի մախլուզը թարա-
ֆընտան միւշէրրէֆ օլմայը իսթէր վէ պաշ-
գա սուրէթլէ եաբամազ: Էվլէթ, ինսան
սաաթէթ վէ եա պէտպալթըլլա ինթիսապ
իթմէք խուսուընտա հիւր տիր, մուխթար
տըր: Փագաթ խահ նա խահ, քէնտի սախի-
պի եֆրեմի օլան ձէնապը Ալլահըն հիւքիւմ-
րանէսինէ սէրֆիւրիւ իտիպ, օնը թագիմ
իթմէյէ մէճպուր տըր, վէ պու տա ինսա-
նըն սէմալաթտա քէնտի իշիւնմընա մէճտ
վէրմէսի վէ եախօա ճէհէննէմտէ օնուհ ա-
տալէթինի թաստիզ էյլէմէսի սուրէթիյլ տէ
գապիլ տիր :

բ. Եայտ Ալլահ կիւնահեաւըն եօզ իր-
սեյսի, օնուհ գանուըն իլահիին իլաֆիւմսիզ
գալանագը. չիւնքի կիւնահեաւըն իշին հիշ
օլմագ պիր ուզուպէթ օլմագտան զիյատէ
մուճիպի մէմուհիյէթ պիր հալ տըր. գա-
թէն օնուհ իսթէտիյի տէ օ տըր: Պու տիւն-
եատէ հէվայի նէֆսանիյէսինի մէմուհու իթ-
տիքտէն սօնրա ճանըլլա, թէնիյլէ էօլիւպ եօզ
օլուպ տա Ալլահըն ատալէթինին բէնչէսին-
տէն թախիլիս կիրիպան իթմէք կիւնահեա-
ւըն ճանընա միւնէթ տիր: Իշթէ պու օնուհ
իշին պիր իոթիւրահաթըն էպէտիյէ տէմէք տիր :

Պինաէն ալէյն, կիւնաքեարը մահւոյ իթմէք՝
գանուներ իլանիյի հիւքիւմսիւզ պրագմագ օ-
լաճագ տըր. չիւնքի օ հալտէ Ալլան քէնտի-
սինէ գարչը իսեան իթմիչ օլան ինսանը թէճ-
զիյէ խուսուսընտա աճիգ գալմըչ օլաճագ
տըր:

գ. Քէզալիք գապահաթլարըն աղըրլըղընա
վէ քէսթէթինէ կէօրէ տէ միւլիթէլիֆ ճէզա-
լար թէրէթթիւպ իթմէք լազըմ կէլիւր, Հալ-
պու քի Ալլանըն կիւնաքեարը թէճզիյէ իթ-
մէք իչին օնը մահւոյ իթմէքտէն մատա չա-
րէսի օլմագսա, արթըզ ճիւրմինէ կէօրէ ճէ-
զա վէրմէք էսասը մուհաֆաղա խոլիէմէզ:
Սօգ օլմագսա հիչ պիր թէսրիճի հալ եօգ
տըր, շէօյլէ քի էյեր հէր միւլմիմ տէ աշնի
ճէզայա սէզա կէօրիւլիւրսէ, արթըզ ճիւրմ
ու գապահաթլար արասընտա հիչ պիր ֆարգ
գալմագ, պու աճայիպ մուսալաթ ֆիքրի ա-
տալէթի քեամիլէն մահւոյ իտէր: Էօյլէ գա-
պուլ իթմէլի տիր քի պու էօմիւրտէն սօնրա
կիւնաքեար նէ՝ աֆվա մագհար օլուր վէ նէ
տէ եօգ օլապիլիւր: Էպէտի ճէզայա մահթիւմ
գալաճագ տըր:

(Մապաթի վար)

ՊԻՈՍԺ. (*)

(Շար.)

Արհի. Յովսէփ Եպիսկոպոս Սարգօ իր
թեմը կը գտնէր ամբողջական կաղմալուծման
մը մէջ: Բաղաքական կուսակցութիւններ
մեծ պառակտում յառաջ բերած և ազդած
էին նոյն իսկ կղերին վրայ: Մինչ քահանա-
ներէն շատերը բնաւ ուսմունք չէին ընել,
ոմանց միտքն ալ փրկիսոփայական նորելուկ
եկամուտ սկզբունքներով վեր ի վայր եղած
էր անոնց մէջ, և անոնց միտութիւնն ու
իմացականութիւնը ընդդիմամարտ կ'ողորէր
կաթողիկէ հրամանակարգ վարդապետու-
թեանց դէմ: Այս արդիականներէն ոմանք,
ինչպէս զրապաշտ փրկիսոփայ Արսիկօ՝ որ
ժամանակաւ Մանդովայի կանոնիկոս եղած
էր, նորասիրութեան և թեթեւամտութեան
հեղեղէն տարուելով, Եկեղեցիէն կատարեալ

խղում յայտարարած էին՝ մերժելով ուրա-
նալով ամէն հաւատք: Իտալական գրաւու-
մէն վերջ, կղերին ընկերային դիրքն ալ
խախտած և անհնարին անարժան վիճակի
մը վերածուած էր. քահանաներէն շատերը
ա՛յնքան զրկուած էին իրենց օրինաւոր ապ-
րուստի հայթայթումէն, որ՝ անօթութենէ
չմեռնելու համար, տարին քանի մը անգամ
ողորմութիւն հաւաքելու հարկին մէջ կը
գտնուէին: Կաթողիկեայ ուղղութիւնը կար-
ծես չէր կրնար այլ եւս համարձակիլ եկեղե-
ցիէն դուրս ելլել, ոյր վասն և ժողովրդեան
մի մեծ մասը անկէ հեռացած գտարացած
էր: Ժողովուրդը կրօնքէն պաղեցնելու ոչ
սակաւ մնասաբեր օգնական եղաւ նաեւ
կղերին չար օրինակը: Երկու գաւառներ ըմ-
բոստացած էին եպիսկոպոսական իշխանու-
թեան դէմ: Կանոնիկոսները ճշդութեամբ
չէին յարատեւեր դասու ժամերգութեան.
Ժողովրդապետները անհողութեամբ զանց
կ'ընէին քարոզութիւնը ու Բրիտանիական
Վարդապետութիւնը: Ընկերութեան բար-
ձրագոյն խաւերը թաթխուած էին մատ-
նականութեամբ ու ազատականութեամբ.
Իսկ ստորին խաւերը գերազգիւր կատղած
էին հակակրօնական ընկերվարութեամբ:
Նախկին Եպիսկոպոսն Արհի. Ռոդա՝ ինկած
էր պարտականութեան ու կռուոյ դաշտին
վրայ. իր յաջորդն՝ Արհի. Պէրէնկօ, արդէն
տարիներու բռնան տակ կ'ըսէ, և քիչ ա-
ռաջ Ուտինէի արքեպիսկոպոսութեան բար-
ձրացած, կարող չէր եղած բուռն հեղեղին
առջև թումը ըլլալ: Անհրաժեշտ կը զգա-
ցուէր ճշմարիտ աստուածազդեցիկ առաքեալի
մը պէտքը:

Արհի. Յ. Սարգօ այս դժուարին գործոյս
ձեռնարկեց սիրով և աստուածապաշտու-
թեամբ, բայց միանգամայն մեծ հաստատա-
կամութեամբ և արիութեամբ: Խոյս տալով
ամէն տեսակ ընդհարումէ, Արհի. Ռոդայէ
ծրագրուած հիմերուն վրայ շարունակեց աշ-
խատիլ, և անոր անկատար մնացած գործը
պսակեց աւարտեց: Իր առաջին հոգն ու
ինամքը նուիրուեցաւ պատրաստելու և ար-
մատական կերպով վերանորոգելու կղերը:

(*) Տե՛ս թիւ 174, էջ 743:

բան մը՝ որ թեմի մը մէջ ամենէն ստիպողական և ամենակարեւորն է. այլ մանաւանդ հաստատապէս պնդելով երկու ծղխնիներու վրայ, անկեղծաւոր բարեպաշտութեան ու ճշմարտանուն գիտութեան ուսմունքին վրայ: Իր եկած ժամանակ թեմական կղերանոցը կը դիմէր դէպ ի յայտնի կործանում. նա գիտցաւ սուղ ժամանակամիջոցի մը մէջ նոր ի նորոյ ծաղկեցնել զայն: Գրեթէ ամէն օր կ'այցելէր հոն՝ ի վեր հանելու համար ինչ թերութիւն որ կար, և ստէպ ներկայ կը գտնուէր դասախօսութիւններու. նա աւանդիկ անարժան չէր սեպեր իր բարձր աստիճանին՝ անձամբ իսկ դասախօսել պատանի կղերներուն: Ստէպ կը պատահէր, ինչպէս ինքը կը տեղեկացնէր ի Հոռոմ, որ ինքը՝ հիւանդացած կամ ուրիշ պատճառաւ բացակայ ուսուցիչները կը ստիպուէր փոխանակելու՝ ուսողութեան, բնագիտութեան և այլ ճիւղերու մէջ: Եկեղեցական երգեցողութեան քաջածանօթ ըլլալով, ինք ստանձնեց անոր դասաւանդութիւնը, և երիտաւարէ կղերականները նախապէս կը պատրաստէր Մայր Եկեղեցւոյ ծիսակատարութիւններուն:

Դաստիարակութեան այս մեծ գործին մէջ իրեն իբր թանկապիւն օգնականներ կանչեց իր քով գերաշնորհ մարդիկ. Յիսուսեաններուն յանձնեց հոգեւոր առաջնորդութեան և ընտանեկան աստուածաբանութեան ուսուցումը: Իսկ հաւատացեալները եւս առաւել մարդեւում վարժեցնելու համար Ս. Գրոց իմացողութեան, կղերանոցի մեծ դահլիճին մէջ անոր վրայ հրապարակական բանախօսութիւններ սահմանեց, որոնց կրնար ուղողը ներկայ դտնուիլ ազատօրէն:

Արհի. Սարգո՝ նոյն իսկ իր եպիսկոպոսական հանգամանքին մէջ, իր ամենամեծ ուշադրութիւնը դարձուց հոգեւոր հովուական գործնական հոգերուն ու խնամածութեան: Հոռոմեական Դիւանին ղրկած իր տեղեկագիրներէն ակնյայտի կը նշմարուի թէ որպիսի՝ լայնամիտ գաղափարներով կ'ուսումնասիրէր նա ու կ'ըմբռնէր այդ ամենակարեւոր գործերը: Անգամ մը, օրինակի ազա-

դաւ, անիկա երեք փափաքներ կը յայտնէ.

1. Շարաթ օրուան պահեցողութեան վերացուիլը, անոր համար որ ստէպ զանց կ'առնուէր. 2. Տօնական օրերու նուազեցումը, ինչպէս ուրիշ երկիրներու մէջ, տեղի ունեցած է. 3. Բովանդակ Խտալիոյ համար միակ Բրիտոնէական մը, շատ հարցումներով ու կարճ պատասխաններով, զիւրահասկնալի, ժողովրդական և ամենուն կըրթական վիճակին յարմար, որպէս զի ամէն հաւատացեալք՝ իրենց երկրէն դուրս ալ, քրիստոնէական ճշմարտութիւնները միեւնոյն բառերով կարենան լսել: Միեւնոյն գաղափարները յայտնեց Մանդովայի Եպիսկոպոսը նաեւ Բիաչէնցայի համաժողովին մէջ, յամին 1889:

Երկու անգամ այցելեց իր թեմը, և այս տեսակ առիթներու մէջ խոստովանանք կ'ընէր, Ս. Հաղորդութիւն կը բաժնէր, խրատներ, քարոզներ կուտար, բանախօսութիւններ կ'արտասանէր, և ստէպ՝ օրուան մէջ մինչեւ չորս անգամ տուրքին կ'ելլէր: Դրոշմի համար կատարած այցելութեանց մէջ՝ ժողովուրդը կը զգուշացնէր մանաւանդ նոր մոյորութեանց և չար թերթերու դէմ: Շատ տեղեր Ս. Կրթութիւններ քարոզեց օրերով, Կաթողիկէ կեանքի վերանորոգութեան շատ սատարեցին 1888/ին ի Մանդովա գումարուած Թեմական Սիւնհոգոսին վճիռները:

Անհաւատալի ճիգեր թափելէ վերջը, ազնիւ և անչափանդիր Եպիսկոպոսը հուսկ ուրեմն յաջողեցաւ ամենէն ծանր եղող զեղծումները վերցնելու, ոգիները հանդարտեցնելու, զանոնք առաջնորդելու իրենց նախնեաց անսասան հաւատքին, կղերին մէջ արթնցնելու եկեղեցական ոգին, զայն հասարակաց մեծարանքին առարկայ ընելու, և ի մասնաւորի հոգ հոգեւոր բարեկարգելու:

Այս վերանորոգութեան գործոյն մէջ իրեն մեծապէս սատար եղան իր մեծ բարեմասնութիւնները: Անոնք որ ճանչցան զինքն իբր Եպիսկոպոս Մանդովայի, յոյժ կը գովարանեն իր ընդարձակ մշակոյթը, իր սքանչելի գործունէութիւնը և իր կազմակերպիչ ճարտիկութիւնը:

(Շարունակելի)

ՄԵՌԵԱԼՆԵՐՈՒՆ ՕՐԸ

Ո՛վ օր աղիսաբեր, օ՛ր, ուր Աստուած փրկեցինք,
Սեւ անդունդների ժայթած հրավառ հեղեղով,
Պիտի դարձնեւ մոխիր անբողջ այս ժեզերքն ընդարձակ:

Սիրիքան անուանի եւ թագաւոր Մարգարէն,
Իմաստուն Թարգմանն՝ անհաս խորհուրդներուն Աստուծոյ,
Այս մեծ օրն որոշած եւն նշաններով զանազան:

Ի՞նչ խոռվութիւն արեւուն մէջ, երբոր այն խիտ Դաւաւորն,
Արձակելով անեկուսեւ պղպններն իր բարկութեան,
Երեւան զայ հաւնակ զինուած փայլակներով, շանքերով,

Եւ բազմի օղին մէջը բարձրացած զահին վրայ,
Դաւեթու զըլուխներն եղեռնագործ, ապիրաս,
Եւ պատժելու անոնց ոճիւրն յաւերժական շանջանքով:

Ամենեւն խուշ աշերուն մէջ փողն ըլլալով շեւի,
Ասեւն ճեղ տարածուած փոշիին նոր կեանք տալով,
Շիրիւներուն արհաւիրքէն պիտի հանեւ մեռեալներն:

Եւ ընդհանուր զարհուրանքին մէջ բովանդակ Բընութեան,
Արաշին ոսթին առջեւը դաշխահար արարածն
Պիտի լրսեւ կա՛ւ երանին եւ կաւ անեծքն առ յաւեօ:

Այն անեղ զըրթին մէջ պիտի կարդանք այն ասեւ
Ահագնութիւնն ակներեւ մեր ոճիւրներուն դժբընդակ.
Եւ ուղիղ, արդարադաս վճիռը սուրբ խաւովեան:

Այն կորովաբիր, խորաբախանց Դաւաւորն,
Երեւան քերելով աշնան սոսկալի ոճիւրներ,
Տիեզերքի այթին առջեւ պիտի պատժեւ խաւօրէն:

Ի՞նչ պատասխան այն սոսկալի Դաւաւորին պիտի տաւ,
Ո՛վ ամոքեւ պիտի անոր արդարութիւնն անողոք,
Երբ Արդարն անգամ անկեւ պիտի դողայ, սարսափի:

Տե՛ր իմ, հանդարե՛հ, զայրոյթդ ըրեւ զինաբալի,
Առանց փղի մեր արթին մէջ փղի հաւոյ թան չկայ,
Սուրբերդ պղապելով քու բարիքներդ կը պսակես:

Մի՛ մոռնար քե ղուն անեւան բնութեանք Աստուած ըլլալով,
Եկար մեր վերջը քու ճեղու տաժանակիր վշերով,
Եկար մարդ, մահկանացու, փրկելու մարդը կորսուած:

Ոսկերդ պարսաւեցաւ իմ ետեւս վազելի.
Մեռա՛ր դու հային վրայ որ ինձ նոր կեանք պարգեւես,
Արիւնն Ասուծոյ քափուած չըլլա՛յ թող գուր ճեղ:

Անայա՛ն Դասաւոր, արդարադատ վրեժիդ մեջ,
Թո՛ղ այսօր ողորմութեանդ ազդեցութիւնն զգաւ ես,
Խսութեանդ օրն իմ դասաւորն շինելի շատ անայ:

Եթէ ոճիրս քեզի զայրոյթ, զղջունն զո՛ւր թող ազդի,
Կու գաւ արսաւաւորն աջով, հեծող շրթունքով
Եւ համակ անօրսահար ճակտով, արտով վշտաբեկ:

Դուն որ հրեշտակ կը դարձնես Մագդաղիկէն մեղաւոր,
Եւ չար աւազակը կ'ընես սուրբ մարտիրոս,
Ոճրագործին անկաւ կ'ուզես որ մընայ յոյս մը խոնարհ:

Արդ քեզի կը դիմես, քո քարիքներդ իմ զենքերս են,
Արդա՛ր պատիժիս անցես առ, ջրով արցունքիս
Մարե՛ք թորթոխումն այն յաւերժական հուրերուն:

Երբ ձեռքդ, ընտրութեամբ որ ահաբեկ կ'ընէ զիս,
Այծերը ձախ կողերդ դրնէ իսկ աջակողմն հօշո՛ւ սուրբ,
Փառաւորեալ գաղութներուն խուրճին մեջ զիս հանգչեցուր:

Եւ երբ այն թշուառներն, որոշընդոս գոյիւնովդ,
Երկրիս անդունդներուն խորքը հոսին զահալքով,
Թող որ մենեւ սուրբերուն հետ արհայրութիւնն երկինքի:

Կը տեսնես, ո՛վ Տէր Ասուած իմ, սիրքս վշտով կը զեղու.
Եւ ըսպառող կրակ մը զայն գրեթէ մոխիր կը դարձնէ.
Եթէ զիս չը պաշտպանես՝ ի՞նչ պիտի ըլլաւ այն ասեմ:

Ո՛վ օր, կարծրածէն շատ անշի տակաւի,
Օ՛ր, ուր խորքէն տապաններուն պիտի ելլէ յանցաւորն,
Դասաւորին անցել խղճի խայթէ սանջուած, դողաւա՛ր:

Բա՛ղր Յիսուս, որուն սերն է գերիվարդ մեր մեղքին,
Փա՛ռք օրս անունիդ, շրնորհիւդ տո՛ւր ողբերուն,
Հանգի՛ւս օրս մեռեալներուն:

Թարգմանեց ԱՐՁԱՆ

ԱՃԱՅԻՊ ՆԷՃԱԹ

(Տեկամի)

2

Պու աւելցատէ գատընըն պիրատէրի մօսիէօ տը Պէրկ զանն իտիլտիկի կիպի վէֆաթ իթմէմիշտի: Բէնտիսի մաճար սիւարի ալայը եիւզ պաշըսը օլտուղու հալտէ, շիտտէթլի պիր հիւճուճտա պարկիրտէն աիւշէրէք մէճօրուհ գալմըշտը, վէ քէնտի աաաքիրի՝ գօմանտանլարընը վէֆաթ իթմիշ զաննըլա հարպ մէյտանընտա թէրք իթմիշլէրտի: հալպու քի աիւշմէն թարաֆընտան գալտըրըլարագ Սիպէրիանին օ պիր ուճուհա հազլ իտիլմիշտի: Օրատա հիշ պիր վասիթա իլէ ալիլէսինէ մէքթուպլարընը կէճուտէրէմէմիշ վէ անա մուգապիլ քէնտիսի սախի հիշ պիր հալստիս իսթիհաալ իտէմէմիշտի: Նիհայէթ հարպ խիթամ պուլարագ, մօսիէօ տը Պէրկ տախի իւսէրա միւպատէլէսինտէ տախիլ պուլուհըյօրտը վէ թէրֆիէն պին պաշըլըք ըիւթպէսինէ թային օլուհարագ, ալայը իլէ պէրապէր սէվկիլիւ վաթմանընա ալտէթ իտիյօրտը: Պիր քիւշիւք շէհիրտէն միւրուր իթտիքլէրի էսնատա, օրատան պիր գաշ ֆարսախ ուղապտա տաղլար արասընտա միւնֆէրիտ պիր գօնագտա տօսթլարընտան պիրինին իկամէթ իթտիկինի էյօրէնէրէք, մօսիէօ տը Պէրկ զիյարէթ վէրմէք իւզրէ օրայա կիթմիշտի: Օրատա գայըմ պիրատէրինին վէֆաթընը քէմալը թէէսիւֆլէ խապէր ալտը: մա մաֆիյի տօսթը պուհտան ֆազլա տուլ գատըն վէ իւշ էվլատընըն աշվալը հազըրէլէրինէ տայիր զիյատէ վէ գաթի մալիւմաթ վէրէմէտի:

Ազաւմ մօսիէօ տը Պէրկ, խաաէմէսի ըէֆագաթընտա՝ սուսըք վէ վաշի օլտն օ էյալէթի թանըմատըղը հալտէ, ալայընըն գօնապաշմըշ օլտուղու քիւշիւք շէհիրէ ալտէթ իթմէք իւզրէ կէրի տէճուիւշտիւ: Ֆագաթ կիւմբան օլտու: զաթէն սօն պահար ըէք զիյատէ իլէրիլէմիշ վէ մահիթապ սիյահ քէօքնարլար արասընտա եիւրիւմէքտէ օլտն իքի եօլճուլարը պիր միւտտէթ իշին թէնվիր իթտիքտէն սօնրա կիլլէնմիշտի: Դալըն պուլութլար սէմայը սէթր իթմիշ վէ շիտտէթլի

պիր ըիւզկեար օրմանըն աղաճլարընը սալլամագտա օլտուղը հալտէ, գար իլէ պարընք սաղանագ պին պաշընըն եիւզիւնէ վուրույօրտը: Զուլմէթ օ գատար զիյատէ օլտու քի տղտճլար արասընտան սէմայը կէօրմէք բէք միւշքիլլէշմիշտի: Մօսիէօ տը Պէրկ խըտմէթճիսինէ:

— Միւտնիշ հալայա ըաղմէն, կիճէյի շուվաշի օրման տախիլինտէ իմար իթմէք մէճօ պուրիլէթինտէյիշ, տէտի:

Խըտմէթճիսի հասքա ճէվապէն:

— Ե, բէք էյի, իլք տէֆա տէյիլ եա պէօյլէ օրտուկեան գուրմամըք, տէտի: պէն շիմտի պուրատա կիւզէլ պիր աթէշ եագաճաղըմ, հէր նէ գատար եէմէք վէ իշմէք իշին պիր շէյիմիշ եօգսատա, պարի ըսընըրըք եա:

Պէօյլէ սէօյլէմէքլէ պէրապէր պէյկիրտէն էնտի, հայվանլարը պիր աղաճա պաղլայարագ, ըիւզկեար վէ եաղմուրտան մասուհ պիր մահալ արատը: Ֆագաթ աթէշ եագաճաղ իշին պէյհուտէ ուղրաշտը: սալլար վէ եաքրազլար զիյատէսիլլէ ըսլագ իտի: մա մաֆիյի ֆուրթուհա վէ եաղմուր թէտրիճի պիր սուրէթտէ սիւքիւնէթ քէսպ իթմիշտի: Պիրտէն պիրէ ուղաղտան պիր քէօրէք հալլամասը իշիթտիլէր:

Հաոքա՝ Համտ օլտուհ, պիր քէօյ վէ եա չիֆթիք գուրպինտէ պուլուհըյօրըք, տէտի:

Պինպաշը՝ Պէնտէ էօյլէ ինթիմալ վէրիյօրում, պէյկիրլէրիմիղէ թէքրար պինէլիմ վէ հալլամալարըն իշիտիլտիկի թարաֆա սոզրու հարաքէթ իտէլիմ, տէտի:

Պիր միւտտէթ հարէքէթտէն սօնրա ուգագտան աղաճլար արասընտան պիր զիյանըն բարլատըղընը միւշահէտէ իթտիլէր: քէման պէ գէման պու զիյա զայպ օլարագ պիր միւտտէթ սօնրա թէքրար կէօրիւնիւյօրտը: Նիհայէթ օրման տախիլինտէ միւնֆէրիտ պիր խանէյէ վասըլ օլտուլար: պուրատա ոամանըք, ախըր վէ պաղչէ մէվճուտ իտի: պուլլարըն քէաֆֆէսի էքէյիճէ եիւքսէք պիր աիվարլա իհաթէ օլուհմուշտը: Մաթպուիւն օճաղընտա եանան կիւզէլ պիր աթէշին ալտընըլը խարիճտէ աղաճլար իւզէրինէ զըմըզըմթրագ պիր

սուրէթտէ աքս խտէրէք զուլմէթի պիր տէ-
րէճէյէ գատար թէնգլիս իտլյօրտը: Խանէ
խսէ զիտտէ մուգավիմ պիր սուրէթտէ ինչա
խտիւմիշ, բէնճէրէլէր տէմիր բարմաղլըզլար-
լա միւճէհէզ պուլունմագտա իտի: Իքի
սիւվարիլէր պէյկիրտէն էնէրէք հայվանլարը
կէմէրինտէն թուրտուլար վէ խանէնին
մէտխալընը պուլմագ իչիւն էթրաֆընը սօ-
լաշտըլար վէ նիհայէթ պէօյիւք գարուլը
քէշֆ իթաիլէր: Խըտմէթճի գարուլը միւ-
թէատիտ տէֆա պէհուտէ եէրէ վուրտուգ-
տան սօնրա պիւթիւն գուլվէթիլէ թէք-
րարլատը: Նիհայէթ պէօյիւք գարուլընը գա-
նատլարընտան պիրինաէ իմալ իտիւմիշ օլան
պիր գարուճըք աշըլարագ պուլուն բարմագ-
լըզը արասընտա պիր զիյա բարլատը վէ
աշիւր զէմանտա պիր սէտա:

— Սիւզ քիմ սինիզ, տիյէ սիւվալ իթտի:
Հասքա՝ Օրմանտա եօլունու զայպ էտէն
եօլճուլարըզ, տիյէ ճէվապ վէրտի:

— Հա՛, հա՛, ֆէնա պիր սաաթտա կէ-
լիյօրսուլուզ, տիյէ սէտա իչէրիտէն մըրըլ-
տանտը: զա՛շ քիչիսինիզ:

Հասքա՝ Իքի քիչի վէ իքի պէյկիր, ճէ-
վապընը վէրտի:

— Հա՛, հա՛, մըրըլտանտը թէքրար ալ-
նը սէտա: տէմէք ճէմմէն տէօրթ բէէս:

Վէ պուլ քէլիմէլէրի սէօյէմէքլէ պէրա-
պէր իխթիյար վէ պուրուշուք պիր չէհրէ՛
էճնէպիլէրի տահա էյի թէտգիզ վէ մուսհէ-
նէ էթմէք իւզրէ գարուճըզա եաղլաշտը:

Պին պաշը՝ Վա՛յ պապասընըն, էկէր գատըն
սաշլարը օլմասա իտի, իխթիյար պիր սիւվա-
րինին էքշի չէհրէսի օլաուղունա եէմին է-
տէրտիմ, տիյէ տիւշիւնմիւշտիւ վէ թէքար-
րիւպ իտէրէք:

— Մատամ, լու թֆէն կիճէյի իմրար էթ-
մէք իչիւն պիզէ պիր մէսքէն հիմմէթ պու-
լուրունուզ, տէտի:

Իխթիյար՝ Բէք ալէա՛, բէք սէվիմիլի պիր
պէյ սըֆաթընա մալիք օլտուղունուզ իչուն
մաէլմէմնունիյէ սիգի միսաֆիր գապուլ ի-
տէրիմ, տէյերէք պէօյիւք գարուլընը գա-
նատլարընտան պիրինի աշտը:

Պին պաշը կիրտի: Խըտմէթճիսի իսէ իքի

պէյկիրէրի կէմտէն թուրտագ անը թէա-
քիւլ իթտի:

— Ախրըն գարուլը իշթէ չու տըր,
տէյերէք իխթիյար գատըն անա իրայէ էյլէ-
տի: Իչէրի կիրէրքէն սաղտա սաըլը պիր
ֆէնէր պուլաճագսընըզ, պանա վէրինիզ տէ
անը սիզէ եազայըմ: պէյկիրէրինիզ կիւզէլ
եաթագլըզ իլէ պէրապէր արզու իթտիլէրի
մըգաար տա օթ պուլաճագլար: Եուլաֆա
կէլէրէք օ տա էքսիք տէյիլ տիր:

Հասքա պէյկիրէրի ախըրա չէքտի: պին
պաշը տախի օրայա կիրէրէք, պէյկիրէրին
րահաթ օլաճագլարընտան էմին օլարագ զիա-
տէսիլէ մէմնուն օլմուշտը: Պու էմանտա
պունսամըշ գատըն թէքրար պէօյիւք գարուլը
քէմալը տըզգաթլա գարայարագ անախթար-
լարընը ճէպինէ վազ իթմիշտի:

Իխթիյար գատըն՝ Շիմտի, սէվկիւլիւ սիւ-
վարի լութֆէն էվէ կիրինիզ, տէտի:

Պին պաշը իսէ ճէվապէն:

— Մաէլմէմնունիյէ, ֆապաթ, բէճա ի-
տէրիմ, էյի վալիտէճիյիմ, լութֆէն պանա
անիտէ եէմէք իսթիհզար իտինիզ: պա խու-
սուս միտէմի թէսխին իտէպիլէճէք պիր
չօրպա, զիրա սույա տիւշմիւշ պիր քէօրէք
կիպի թիթրէյօրու վէ գուրտլար կիպի տէ
աճըզ, տէտի:

Իխթիյար գատըն՝ Բէք էյի ֆապաթ չօզ
թէէսիւֆ իտէրիմ քի սիգի արզու իթտիյիմ
վէճնլէ գապուլ վէ իքրամ իտէմէյէճէյիմ,
խանէնին սահիպի օլան օղլումնամէվճուտտըր
տէտի: էլիմտէն կէլտիյի գատար ընը իգամէ
էթմէյէ զայրէթ իտէճէյիմ: Կէօրտիւշիւնիւզ
կիպի պէն թօփալ վէ ազ չէվիկիմ: եէմէք
հազըրլամագ, մասայը գուրմագ վէ սուֆ-
րատա խըտմէթ էթմէք պէնիմ հաշըմա կէօ-
րէ պիր ազ չօզ իշ տիր: պինաէն ալէյն սի-
զէ սուֆրատա խըտմէթ էթմէք իւզրէ գըզ
թօրունու կէնճ Իւրսիւլիւ չազըրաճաղըմ-
զէվալը չօճուզ տիւտիզ տիր վէ պիր քէլիմէ
պիլէ թէլէֆֆիւզ իտէմէզ: հաղիգաթէն բէք
հազըզ տըր, զիրա բէք կիւզէլ իչիտաիկի
կիպի քէնտիսինէ տէնիլէն հէր չէյի անլար
վէ քէնտի հալինէ կէօրէ տէ օ գատար մէ-
հարէթսիզ տէյիլ տիր: մամաֆիյն հարըմ

սասթա գոսար օղլում ամտէթ էտէր վէ օ վագըթ կէրէթ խըտմէթ վէ կէրէթ տէ միւ-
քեալէմէ տահա էյի օլուր:

(Մապաթի վար)

Միքեռնիս
ԳԵՈՐԳ ԳԱՍՏԱՊԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՔԱՂԱՆԱՆ — Ժողովուրդին ամէն բանէ աւելի
պէտք է քահանան, որ աղքատներուն նպաստներ
կը հայթայթէ, հիւանդները կը մխիթարէ, ընտո-
նեաց մէջ խաղաղութիւն կը հաստատէ եւ որ
բարոյականի ուսուցչին է: Երբ քահանան կ'ըսէ.
«Աստուած պաշտեցէք, արդար եղէք, ողորմած,
ներողմիտ, կարեկի՛ց եղէք», կը թախանձէ Սուրբ
Պօղոսի պէս, կը յորդորէ քահանան հոգիներու
բժիշկ է, եւ շատ լաւ բժիշկ: Հիւանդներուն դէմ
չի դայրանար: Ուսուցանելով չի շատանար. կ'աղօ-
թէ, բարի օրինակ կու տայ: Ֆրանսայի եպիսկոպոս-
ներէն շատերը ժողովուրդին յարգելի եւ սիրելի
եղած են իրենց ընթացքով եւ ողորմածութեամբ:
Ընդհանրապէս եպիսկոպոսները եւ ժողովրդապետ-
ները այնքան բարեք ըրած են ֆրանսայի մէջ, որ-
չափ վրաս հասուցեր են հոն ատենով կրօնական
կռիւնները...: Հարկ է ուրեմն քահանաներուն օգնել
որպէս զի բարեքը ուղղին եւ մեր աղօթքները
Աստուծոյ մատուցանեն:

Վօլքեր (Oeuvres)

ՔԱՂԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՍԻՐՏ ՄԸ

Ա. — Թէեւ բարեգործութիւնը հիւանդի է ա-
մէն հասակի մէջ, բայց աւելի կը յուզէ գիւղ բեր-
երեւան գայ մատուղ տիոց վրայ, ուր, առ հասա-
րակ աւելի ինքնաբերական քան խորհրդածեալ
ըլլալով, հոգւոյն ճշգրիտ արտայայտութիւնն է:

Պիոս Զ., փառքը Պետրոսի Աթոռին, շատ կա-
նուխէն սկսաւ գործադրել, իր կարողութեան չա-
փով, այս աստուածային ընկերութիւնը, որ
քրիստոնէութեան հիւս ու խկութիւնն է:

Հետեւեալ միջադէպը տեղի ունեցաւ Սէպէն
քաղքին մէջ ուր ապագայ Պապը, պատանի Պրոս-
քին, ուսմունք կ'ընէր այն ատեն:

Յաճախ, իր պարտականութիւնները լրացնելէ
յետոյ, կը սիրէր պտոյտի ելլել դաշտերուն մէջ
բարեկամի մը հետ, որ իրեն շատ սիրելի եւ հա-
մակընել էր:

Միջադէպը պատմողն է այս բարեկամը, որուն
ճշմարտախօսութիւնը ամէն կասկածէ վեր է:

Բ. — Երեկոյ մը, Պրասքի քով եկաւ որ պտոյ-

տի ելլենք, ըստ սովորութեան: Գարուն էր, ծա-
ռերը ծաղկած էին, մարգարիտները եւ ոսկեկո-
կոնները զը պնէին մարգերը, բնութեան մէջ ա-
մէն բան կը ժպտէր եւ կ'երգէր. եւ կը հիանա-
լինք մեր առջեւ պարզուած գեղանկարին վրայ:
առանց լուսթիւնը իզելու պէտք մը հլալու:

Այսպէս քիչ մը քալելէ յետոյ, այգիի մը մօտ
հասանք, որուն ծայրը նշմարեցինք նոր շէնք մը
որուն անկարգ վիճակը ցոյց կու տար բնակիչնե-
րուն աղքատութիւնը:

Մէկէն խեղդուկ հեծեծանքներ լսեցինք...:
Հետաքրքրութիւնս գերազգիւ վիճակի մը հա-
սաւ, եւ վազեցի անցած դարձածը հասկնալու հա-
մար:

Իսկ Պրասքի այնքան վախցաւ որ նախ եւ ա-
ռաջ խոյս տալու մղուեցաւ. բայց որովհետեւ սիրտը
աղնիւ էր եւ ի բնէ կարեկցող, ցաւեցաւ իր տկա-
րութեան վրայ եւ ետ դարձաւ:

Եւ շուտով՝ մինակ յառաջացաւ դէպ ի այն մե-
նաւոր տունը ուսկից հեծութիւններ լուսած էին:

Իսկ քայլերս արագեցի եւ գոց դուռը դար-
կինք:

Յետին աստիճանի նիհար եւ դաւկահար կին
մը դանդաղօրէն եկաւ դուռը բացաւ:

— Ի՞նչ կ'ուզէք, զաւակներս, ըսաւ ան: Ճա՛մ-
բանի՞դ կորուսեր էք արդեօք:

— Մեր այս տեղ դալուն պատճառը այդ չէ,
մա՛յրիկ, պատասխանեց Պրասքի, այլ հեծկտուք-
ներ լսեցինք...: Եթէ հիւանդ ունիք, թերեւս կա-
րենանք ձեզի օգտակար ըլլալ...:

Աւա՛ղ, ո՛չ, մե՞ք հիւանդ չենք, այլ շա՛տ
թշուառ...: Աղջկանս, որուն հեծկտուքը լսեցիք,
ամուսինը բանտարկուած է պարտքի մը համար
զոր մեր չնչին եկամուտներով անկարող ենք վճի-
րելու: Խեղճը հոս մինակ մնացեր է իր չորս փոքր
զաւակներուն հետ, որոնց ի՛նչպէս հաց ձա-
րելին չենք գիտեր, որովհետեւ մշակութեան բո-
լոր աշխատութիւնները փեփսս մինակ կը կատա-
րէր, նկատելով որ կինը բաւական կը յոգնի տան
ներքին գործերով եւ տղոց հոգով: Խե՛ղճ մանուկ-
ներ. ի՞նչ պիտի ըլլան...: Այս իրիկուն անոնց տա-
լիք պատառ մը հաց իսկ չունինք: Մենք ուտելէ
կը հրաժարինք. հարկ պիտի ըլլայ արդէն...: Բայց
չինք կրնար անոնց «անօթի» ենք, անօթի՞ ենք»
աղաղակել լսել. ա՛հ, ասիկայք մահ է մեզի հա-
մար...: Արդէն, քիչ առաջ, երբ հարկադրուեցայ
կանոնք անօթի անօթի պառչեցնել, անոնց ձիւքը
սիրտս կտոր կտոր ըրին. եւ պէտք էր տեսնել
նաեւ անոնց թշուառ մօրը յաճատութիւնը...:
Բայց կ'ըսեն թէ աշխարհիս վրայ վրան մարդիկ որ
ուզածնին կը դտնեն, որ բուռերով ոսկի կը թա-
փեն, որպէս զի ձեռք բերեն աւելորդ բաներ, ո-
րոնցմէ շուտով կը ձանձրանան. մինչդեռ մենք...
մենք զուրկ ենք կարեւորէն...: Բայց սակայն չիմ

տրտնջերն Աստուած տէր չէ՝ միմէն ինք միայն գիտէ թէ ինչո՞ւ համար աշխարհի վրայ այսպէս բաներ կը պատահին:

Այս սոսկալի թշուառութեան վրայ սիրտս փղձկեցաւ. քրպանէս քանի մը դահեկան հանեցի եւ սեղանին վրայ դնելով ըսի խեղճ կիներուն.

— Ներուժ կը խնդրեմ այսքան քիչ տալու համար. դպրոցականները սովորաբար շատ հարուստ չեն ըլլար. բայց այդ փոքր թշուառ անմեղները պիտի կարենան ասով գոնէ անօթութիւններն անցընել:

— Ո՛հ, շնորհակա՛լ ենք, շնորհակա՛լ ենք, ազնի՛ւ տղայ, ըսին ինծի:

Եւ երախտագիտութեամբ ձեռքերս սեղմելով.

— Աստուած քեզի սաշտպա՛ն ըլլայ: Այս բարի գործքիդ համար անշուշտ քեզ պիտի օրհնէ. քեզի հարկերապատիկ պիտի հատուցանէ, պիտի տեսնես, թէ՛ այս աշխարհի մէջ եւ թէ անդին:

Չափէ դուրս զարմացայ տեսնելով թէ Պրասքի, որուն ջերմ մարդասիրութիւնը ծանօթ էր ինծի, ասոնց բան մը չտուաւ: Քովը բնաւ ստակ ըլլալու չէր: Բաւական համարեցաւ պառաւին հարցնել, ուրիշ մի քանի բաներէ զատ, թէ ո՞րչափ է այն պարտքը, որուն համար փեսան բանտարկուած է:

— Երեք հարիւր սկուդ է, սիրելի՛ պարսն: Դո՛ւն ըսէ. կրնա՞նք այդքան գումար մը ձեռք բերելու յոյս ունենալ. ուստի այս մասին մենք մեզ չենք խաբար եւ հիմա, կը խոստովանիմ, վհատութեան վերջին աստիճանին հասած ենք:

Ապա, երկու կիները դարձեալ սկսան արտասուել:

— Միմիտարուցէ՛ք, ըսաւ Պրասքի կարեկցաբար, մի միայն Աստուծոյ վրայ դէք յոյսերնիդ, որովհետեւ գրուած է. «Այն, որ ուզեց ամենէն գործվոտ մօր համբմատուիլ, իր զաւակներուն (երբ վստահութեամբ եւ խոնարհութեամբ խնդրին) հացի տեղ քար չի տար»: Անշուշտ Աստուած ուշ կը կատարէ մեր խնդիրքը, եւ յաճախ վերջին վայրկեանին, երբ ամէն խորհրդային օգնութեան յոյս բարձուած կ'ըլլայ, որպէս զի մեզի հասկցնէ

թէ ամէն բարիք իրմէ է: Հանգի՛ստ եղէք, Անիկայ միշտ տառապեալներուն հետ է:

Յետոյ հիւղէն հեռացանք այս աղքատ ընտանիքին թշուառ վիճակէն խորապէս յուզուած: Ուզեցի նոյն բարի մարդոց վրայ խօսիլ, բայց նկատեցի որ Պրասքի ամբողջ խօսակցութիւնը իմ վրաս կը թողուր, ինք հալիւ կը պատասխանէր՝ տխուր մտածումով մը գրաւուած ըլլալով: Ուստի չուզեցի այլ եւս իր մտածումը վրդովել, առաջուան պէս, առանց խօսելու, ճամբանիս շարունակեցինք: Գիշեր էր երբ Սէզէն հասանք:

(Շարունակելի)

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ.— Նոյեմբեր 28ըն Ամենապատիւ Հոգեւոր Տէրը ուղղեց հեռագրով իր շնորհաւորութիւնները նորընտիր քաղաքական Տեղապահ, Արհի. Օգոստինոս Արքեպիսկոպոս Սայեղեանի՝ ծանուցանելով կայսերական կառավարութեան կողմէ ընտրութեան հաստատուելը եւ միանգամայն փութով Պոլիս մեկնելու անհրաժեշտ հարկը:

Ն. Արհիպատուութիւնը անմիջապէս հեռագրով պատասխանեց՝ շնորհակալութիւն մատուցանելով Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ եւ միանգամայն ծանուցանելով Պոլիս մեկնելու կազմ ու պատրաստ ըլլալը:

* * Դեկտեմբեր 2ին Ամենապատիւ Հոգեւոր Տէրը, Պօղոս Պետրոս ԺԳ. Կ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ, ընկերակցութեամբ Կ. Պ. Փոխանորդ Արհի. Յ. Արք. Ռոքոսեանի եւ Տրապիզոնի վիճակաւոր Արհիպատիւ Յ. Եպս. Նազլեանի եւ Գեղյ. Յովհ. Ծ. Վ. Թումայեանի, բարի գալուտեան այցելութիւն տուաւ Կ. Պոլսոյ նորընտիր Առաքելական Նուիրակ Արհի. Անճէլոյ Մ. Տուչի Գերապայծառին, որ Դեկտեմբեր 1ին մայրաքաղաքս ժամանեց եւ Մ. Նա-հանգաջ Դեոպանին եւ Լատին Կղերին կողմէ մեծ պատուով ընդունուեցաւ: Կէս ժամի չափ սիրալիր տեսակցութիւն մը տեղի ունեցաւ: Արհի. Նուիրակը Ն. Ամենապատուութեան հաղորդեց Ս. Դա-հանայապետին ողջոյններն ու օրհնութիւնները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դեպքեր եւ սկզբունքներ	769
Հին վաւերացումներ	772
Եօթնեակ Բրիտանի	774
Գաբոյի Մէգիէպի հասարակ	775
Պիսս Ժ.	777
Մեռեալներու օր	779
Անայիպ Եկեք	781
Այլեւայլ	783

ԱՐՏՈՐԱՏԷՐ

ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՎՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՂԻՊՈՒՆԵԱՆ

Տպարան Կ. Առաքապետի Եպարքոսների, Բերա, Պայրաւ փողոց քիւ 5, Կ. Պոլիս

ԲՍԺԱՆՔԻՆԻՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊՍՅՄԱՆՆԵՐ — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսաւսն-
ման տար. ֆր. 10. վեցամս. 5 — Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ. — Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Պոչիս:

GATOCHIGUÉ ARTZAKANK

Péra, 5, Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեցածանոնով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր խնամքով անոնք ծանուցանել խմբագրութեան:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձալիւ: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է դրուած լոյսին թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցանեց համար մասնատու պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրուի միաւրի զրկել:

Տարր. Սկզբունք Գրիսա. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կովստաս Մահանային վարր. գին 5 դհկն.:

Եսթեր՝ ողբերգութիւն Ուսմինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ է ի վիճակի է՛ւր և իցէ տպագրական դորձոց համար: Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-տարէներ,
մահազդներ, եւն. եւն.: Գիները անմեղքի կերպով աման են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
ընան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne 1. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Ternopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakewy

Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment:

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de marchandises etc.

Achat de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisses d'Epargne à 3. 1/2 % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.